Արձանագրություն N 3

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ/2023/Հ-39>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **22 . 03. 2023թ.**

Մասնակցում էին՝

- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ, ինքը և տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Թամազյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Մ. Բաբայան,
- ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Շ. Հարությունյան,
- ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ.Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ոստիկանության կարիքների համար համակարգիչ ամբողջը մեկում ձեռքբերման նպատակով հայտարարված << ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ/2023/Հ-39>> ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ/2023/Հ-39>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստում արձանագրվեց. «ՍԻԳՄԱ 14» ՍՊԸ–ի կողմից ուղարկված 1 չափաբաժնի նկարագիրը թերի էր լրացված, մասնավորապես հայտում բացակայում էր տեխնիկական բնութագիրը, արտադրողի անունը,ապրանքային նշանը, մակնիշը, ֆիմային անունը: Գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և առաջարկել ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները համաձայն **ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526Ն որոշման կարգի 41-րդ** կետի: 17.03.2023թ.ին կայացել է հանձնաժողովի հերթական նիստը, որում արձանագրվել է, որ ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է ժամանակին: Շտկված հայտն ուսումնասիրելու նպատակող նիստը կասեցվել է:

22.03.2023թ.-ին շարունակվել է << ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ/2023/Հ-39>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստը: Նիստում արձանագրվել է , որ ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին, մասնավորապես հրավերով սահմանված «սենսորային էկրան»-ը բացակայում է և մայրական սալիկ՝ առնվազն IGP Q670 chipset-ի փոխարեն առաջարկվել է ավելի ցածր — H610 chipset :

Հանձնաժողովը որոշեց՝

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ/2023/Հ-39>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջի տեղ զբաղեցրած մասնակից ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ի հայտը մերժել համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526Ն որոշման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

Հանձնաժողովի կողմից կձեռնարկվեն միջոցներ ՍԻԳՄԱ 14 ՍՊԸ-ին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. և բ. ենթակետերի համաձայն:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0, բացակա 1 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Թամազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Բաբայան

Բացակա Շ. Հարությունյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան